

ՌԵՑԻՂԻՎԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ՀԻՄՆԱՆԵՂԻՐՆԵՐԸ*

Հասմիկ Հարությունյան

Նոր հազարամյակ տեղափոխված բազմաթիվ հիմնախնդիրների շարքում ամենավտանգավորը կարելի է համարել հանցավորությունը, որն ավելի սուր ընթացք ստացավ հատկապես վերջին տասնամյակներում: Հանցավորությունը իրական սպառնալիք է դարձել յուրաքանչյուր պետության ազգային անվտանգության համար՝ իրականում խոչընդոտելով սոցիալական, տնտեսական, կազմակերպատարական բարեփոխումների իրականացմանը, հարցականի տակ դնելով ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության կայացման հնարավորությունը:

Վերջին տարիներին ամբողջ աշխարհում նկատվում է քրեածին իրավիճակի վատթարացում, հանցավորության աննախադեպ աճ, որից անմասն չէ ռեցիդիվային հանցավորությունը, որի տեսակարար կշիռը ընդհանուր հանցավորության կառուցվածքում շարունակում է մնալ կայուն: Ռեցիդիվային հանցավորությունը համաշխարհային խնդիր է, և պատահական չէ, որ վերջինիս դեմ պայքարը կանխարգելիչ միջոցառումների ռազմավարության առումով յուրաքանչյուր պետության իրավասպահական մարմինների գործունեության կարևոր ուղղություններից է, որը պահանջում է գիտագործնական լուրջ վերաբերմունք նշված հիմնախնդրին:

Քրեագիտական գրականության մեջ ընդունված է ռեցիդիվային անվանել այն հանցագործությունները, որոնք կատարվում են նախկինում արդեն քրեական պատասխանատվության ենթարկված անձանց կողմից: Որպես կանոն՝ ռեցիդիվային հանցավորությունը իրենից ներկայացնում է հանցավորության ամենավտանգավոր դրսևորումներից մեկը, քանի որ վերջինիս հանրային բարձր վտանգավորությունը պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ մեկից ավելի անգամ հանցագործության կատարումը ինքնին վկայում է այդ անձի հանցավոր վարքագիծը շարունակելու հաստատուն ձգտման, կայուն հակահասարակական հայացքների ու հանդգնումների մասին, ինչը միանշանակ վկայում է նաև պետության և հասարակության կողմից իրենց օրինական ճանապարհից շեղված անդամներին ուղղելու և ըստ անհրաժեշտության օգնելու անկարողության մասին:

Հատկանշական է ընդգծել, որ ռեցիդիվային հանցավորության՝ հատկապես ռեցիդիվի գիտական մեկնաբանման վերաբերյալ տեսակետները, իրենց զարգացմամբ հանդերձ, մշտապես գտնվել են այնպիսի տարբեր գիտությունների ուժեղ ազդեցության ներքո, ինչպիսիք են սոցիոլոգիան, հոգեբանությունը, քրեական իրավունքը և կրիմինոլոգիան:

Ինչ վերաբերում է «ռեցիդիվ» տերմինին, ապա վերջինս առաջացել է լատիներեն «*recidivus*» բառից, որը թարգմանաբար նշանակում է վերադարձող, վերականգնվող: «Հանցագործությունների ռեցիդիվ» հասկացությունը հայտնի էր նաև հին հռոմեական իրավունքին: Իսկ ռուսական օրենսդրության մեջ ռեցիդիվը՝ որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք, ամրագրվեց «Ռուսական պրավդայում»: «Ռեցիդիվ» հասկացության պարզաբանումը ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական

* Հոդվածն ընդունվել է 22.10.2014:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ իրավունքի ամբիոնը:

մեծ նշանակություն, քանի որ հենց դրանով է պայմանավորված ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարում իրականացվող միջոցառումների արդյունավետությունը:

Գիտնականների մոտ ռեցիդիվի հասկացության վերաբերյալ միատեսակ մոտեցում չկա: Հեղինակների մի մասը գտնում է, որ ռեցիդիվը առկա է միայն միաբնույթ հանցագործությունների կատարման դեպքում, իսկ մյուս խումբը պնդում է, որ ռեցիդիվի տակ պետք է հասկանալ նախկինում դատապարտված անձի կողմից ցանկացած բնույթի նոր հանցագործության կատարումը: Իսկ Մ.Ա.Եֆիմովը, Մ.Դ.Շարգորոդսկին, Վ.Ա. Շկուրկոն այն կարծիքին էին, որ ռեցիդիվը առկա է միայն այն դեպքում, երբ անձը կրկին հանցագործություն է կատարում դատապարտումից և նախկին հանցագործության համար նշանակված պատժի լրիվ կամ մասնակի կրումից հետո:[1]Ն.Ֆ.Կուզնեցովայի և Ի.Ի.Գալպերինի կարծիքով` ռեցիդիվի քրեագիտական հասկացությունը իր մեջ ներառում է հանցագործությունների ցանկացած փաստացի կրկնություն` անկախ դատվածության փաստից, վաղեմության ժամկետների անցումից կամ էլ դատվածության մարումից և հանումից:[2] Ներկայումս մասնագիտական գրականության մեջ առավել ընդունված այն տեսակետը, որ ռեցիդիվային հանցավորությունը նախորդ հանցագործության համար դատապարտվելուց հետո հանցագործությունների կրկնությունն է, եթե այդ դատվածությունը հանված կամ մարված չէ: Որոշ հեղինակներ ավելի են կոնկրետացնում այս բնորոշումը և ռեցիդիվ են համարում միայն դիտավորյալ հանցագործությունների կատարումը այն անձի կողմից, ով կրել կամ կրում է իր պատիժը:

Ռեցիդիվ հասկացությունը հայտնի է աշխարհի գրեթե բոլոր երկրների քրեական օրենսդրություններին: Ըստ էության, հանցավորության ընդհանուր կառուցվածքում ռեցիդիվի աճը սովորաբար վկայում է այն մասին, որ դատապարտյալների նկատմամբ կիրառվող քրեական պատիժը ոչ միշտ է նրանց վրա ուղղվելու ազդեցություն ունենում, մասնավորապես որ այն ուղղակի ածանցված է նախկինում ազատագրված անձի պատժի կրման տևողությունից: Ինչպես վկայում են քրեագիտական հետազոտությունների արդյունքները, այն առավել բարձր է այն անձանց մոտ, որոնց պատժի կրման միջին տևողությունը կազմում է երեքից տասը տարի: Իսկ նրանք, ովքեր պատիժը կրել են մինչև մեկ կամ տասը տարուց ավելի ժամկետով, համեմատաբար ավելի քիչ են հակված ռեցիդիվի:[3] Ռեցիդիվի հանրային վտանգավորության կարևոր ցուցանիշ է հանդիսանում կատարված հանցագործությունների բնույթն ու աստիճանը: Որքան ծանր է հանցագործությունը, այնքան վտանգավոր է մեղավոր անձը: Ռեցիդիվիստի կողմից դատվածությունից առաջ և հետո կատարած հանցագործությունները կարող են լինել տարբեր ծանրության և ռեցիդիվիստը կհամարվի ավելի վտանգավոր, եթե ավելի ծանր հանցագործությունը նա կատարի դատապարտումից հետո:

Լինելով հանցավորության կառուցվածքային տարրը` ռեցիդիվն ունի սեփական կառուցվածք: Որպես կանոն, ըստ ավելի վաղ կատարած հանցագործությունների քանակի, տարբերակում են պարզ ռեցիդիվ (նոր հանցագործություն կատարելը քրեական պատիժ կամ քրեական պատժին փոխարինող այլ միջոցների կիրառումից հետո) և բարդ ռեցիդիվ (նոր հանցագործություն կատարելը, օրինակ, կրկնակի, եռակի պատիժի կամ դրան փոխարինող այլ միջոցների կիրառումից հետո): Փաստորեն, դատվածության թվի մեծացումը վկայում է անձի նշանակալիորեն մեծացող հասարակական վտանգավորության մասին, ինչն էլ հաշվի է առնվում օրենսդրի կողմից անձին վտանգավոր կամ առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ ճանաչելիս: Ինչպես իրավագիտորեն նշում է Ի. Մ. Կարպեցը. «Բարդ ռեցիդիվը ավելացնում է սուբյեկտի հանցավոր գործունեության փորձը, ինչն էլ նա կարող է օգտագործել ինչպես իր հանցա-

վոր նպատակների իրագործման, այնպես էլ հանցագործության բացահայտումից խուսափելու նպատակով»:[4]

Ըստ կրկնվող և նրանց նախորդող հանցագործությունների նմանության կամ ոչ նմանության հատկանիշի՝ զանազանվում են ընդհանուր ռեցիդիվ՝ տարբեր տեսակի հանցագործությունների կատարում, և հատուկ ռեցիդիվ՝ միատեսակ հանցագործությունների կատարում:

Իրավաբանական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, որ հատուկ ռեցիդիվը ավելի վտանգավոր է, քան ընդհանուրը: Դա բացատրվում է անձի կողմից միաբնույթ հանցագործությունների համար ոչ միանգամյա դատվածությամբ կոնկրետ հանցագործության կատարման մեջ անձի «մասնագիտացվածությամբ»:[5] Դրա հետ կարելի է համաձայնել: Բայց ռեցիդիվի տարատեսակների համեմատումը հիմք չի տալիս նման կարծիքի համար, քանի որ անձի հակահասարակական հայացքների ու սովորությունների մասին վկայում են ոչ միայն և ոչ այնքան միաբնույթ հանցագործությունների կրկնակի կատարումը, որքան այն փաստը, որ նոր հանցագործությունը կատարվում է դատապարտվելուց հետո: Իսկ դատապարտումը ազդում է ոչ թե առանձին հակահասարակական հայացքների ու սովորությունների վրա, այլ հանցագործի ողջ գիտակցության վրա: Ուստի ընդհանուր ռեցիդիվը նույնպես վկայում է մեղավորի հակահասարակական բնավորության կայունության մասին: Սակայն հատկանշական է ընդգծել, որ ռեցիդիվի վտանգավորությունը կախված է ոչ միայն դրանից, այլ նաև այն հանցագործությունների բնույթից, որոնք նա կարող է կատարել: Տվյալ պարագայում ընդհանուր ռեցիդիվը հիմք է տալիս եզրահանգելու, որ ռեցիդիվիստը ունակ է կատարելու նախկինում կատարած տարաբնույթ հանցագործություններից ցանկացածը և հետևաբար ընդհանուր ռեցիդիվը կարող է ավելի վտանգավոր լինել:

Այսպիսով՝ ռեցիդիվի դասակարգման հիմքերը, դրանց հանրային վտանգավորության աստիճանը, ըստ որոշակի հատկանիշների, չի ենթարկվում հստակ տարբերակման: Դրա իմաստն այն է, թե ռեցիդիվի քանի տեսակ է անհրաժեշտ դնել ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարի միջոցների համակարգի մշակման հիմքում:

Ռեցիդիվային հանցավորության կանխումը ենթադրում է մի շարք համալիր ընդհանուր սոցիալական և հատուկ քրեագիտական բնույթի միջոցառումների իրականացում:

Ռեցիդիվի փաստն ինքնին վկայում է այն մասին, որ դրա կանխմանն ուղղված միջոցառումները, մասնավորապես քրեական պատիժը դեռևս չի հասել իր գլխավոր նախազգուշացման նպատակին: Ինչպես հայտնի է, «քրեական օրենսգրքի հոդված 48-ի երկրորդ մասը ուղղակի սահմանում է, որ պատժի նպատակներից մեկը՝ սոցիալական արդարության վերականգման և պատժի ենթարկված անձին ուղղելու հետ մեկտեղ, համարվում է նաև հանցագործությունների կանխումը: Այդ պատճառով պատժի կրման ընթացքում անհրաժեշտ է դատապարտյալի հետ համապատասխան աշխատանքների իրականացում, որը կնպաստի նրա ուղղմանը և վերադաստիարակմանը:

Նախ և առաջ անհրաժեշտ է նկատել, որ ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարում ձեռք բերած հաջողությունները կախված են նրանից, թե ինչպիսի հաջողությամբ մենք կպայքարենք ընդհանուր հանցավորության դեմ: Ինչպես իրավագիտորեն նշում է Յու. Մ. Անտոնյանը. «Ռեցիդիվային հանցավորության դեմ արդյունավետ պայքարի համար անհրաժեշտ է ավելի կատարելագործել քրեական օրենսդրությունը»: Ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարում կիրառվող միջոցառումների համակարգում քրեական օրենսդրությունը շատ կարևոր դեր է խաղում և պետության համար այն գնահատելի գենք է համարվում:[6]

Ռեցիդիվային հանցավորության կանխման գործում կարևոր նշանակություն ունի քրեակատարողական հիմնարկների գործունեությունը: Նշված հանցավորության դեմ պայքարում քրեակատարողական հիմնարկի դերը կարևորվում է նրանով, որ, իրականացնելով պենիտենցիար հսկողություն, նրանց խնդիրն է ոչ միայն դատապարտյալներին ներգրավել հանրորեն օգտակար աշխատանքի, նրանց մեջ աշխատելու պահանջմունք դաստիարակելով ոչ թե պարզապես բարձրացնել նրանց հանրակրթական ու կուլտուրական մակարդակը, այլ հաղթահարել դատապարտյալների ինքնամեկուսացումը, նրանց հասարակական ակտիվ կյանքի ներգրավել, վերացնել կրիմինոգեն անձնական յուրահատկությունները՝ ապահովելով դրանց փոխարինումը սոցիալականապես դրական յուրահատկություններով: Բնականաբար, այստեղ տեղին է ընդգծել, որ իրականում շատ ջանքեր պետք է գործադրվեն քրեակատարողական հիմնարկների աշխատանքների բարելավման ուղղությամբ: Իհարկե, անվիճելի է այն փաստը, որ նախկին խորհրդային ժամանակների համեմատությամբ ժամանակակից քրեակատարողական համակարգը մեծ առաջընթաց է ապրել: Մասնավորապես փոխվել է այդ հիմնարկների մթնոլորտը, համեմատաբար ավելի քիչ են տեղի ունենում կոնֆլիկտներ, դատապարտյալներին ավելի մեծ հնարավորություններ են ընձեռնված արտաքին աշխարհի հետ կապ հաստատելու համար և այլն, սակայն այնուամենայնիվ, դրանք դեռևս բավարար չեն ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարի միջոցառումների արդյունավետության առումով:

Մեր կարծիքով՝ կարևոր կանխարգելիչ նշանակություն կարող է ունենալ նաև պատժի կրման խիստ տարբերակումը և պայմանների բարելավումը, մյուս անձանց նկատմամբ ռեցիդիվիստների կրիմինոգեն ազդեցության հնարավորինս բացառումը: Բացի դրանից՝ քրեակատարողական հիմնարկների գործունեությունն պետք է ընդգրկի այնպիսի միջոցներ, որոնք կհեշտացնեն դատապարտյալների սոցիալական համակերպումը, ազատ կյանքի անցնելու հոգեբանական նախապատրաստումը, անհրաժեշտության դեպքում նրանց օգնություն ցուցաբերելը աշխատանքային և կենցաղային կարգավորման հարցերում: Դատապարտյալներին ազատ կյանքի նախապատրաստման անբավարար փորձը մեր քրեակատարողական հիմնարկների լուրջ թերություններից մեկն է, ինչը վկայում է պրոբացիոն ծառայության ներդրման հրատապության մասին, քանի որ տվյալ պարագայում խնդիրը վերաբերվում է ոչ միայն հոգեկան նախապատրաստվածությանը, այլև նյութական օգնության ցուցաբերմանը մասնավորապես աշխատանքի և բնակության վայրի առումով: Եվ պատահական չէ, որ նոր հանցագործությունների կատարումը մեծամասամբ կարող է կապված լինել պատիժը կրած անձանց՝ ազատ կյանքի պայմաններին համակերպման դժվարությունների հետ: Ազատագրված պայմաններում պատժի կրման ընթացքում դատապարտյալները զրկվում են շատ հարցեր ինքնուրույն լուծելու հնարավորությունից՝ ընդ որում որքան երկար է այդպիսի պայմաններում պատժի կրման ժամկետը, այնքան ավելի է դժվարանում նշված խնդիրը: Պատժի կրումից հետո անձն ստիպված է լինում համակերպվելու այն միկրոմիջավայրին, որը էապես տարբերվում է այն միջավայրից, որտեղ նա մինչ այդ գտնվում էր: Ուստի տվյալ պարագայում չի կարելի անտեսել այն հոգեկան պատճեղը, որը կարող է առաջանալ դատապարտյալի ու նրա նոր ծանոթների միջև: Կարևոր է նաև ռեցիդիվիստների նկատմամբ սոցիալական հսկողության իրականացման դերը: Դրա թվին են դասվում հարբեցողությամբ, թմրամոլությամբ, խաղամոլությամբ և այլ կախվածությամբ տառապող անձանց հատուկ բժշկական հաստատություններում տեղավորելը, նախկին դրական սոցիալական կապերի հնարավորինս վերականգնումը և բացասական սոցիալական կապերի բացառումը: Դրան կարող է

նպաստել հատուկ տարբերակված և իրականում իրականացվող վարչական հսկողությունը: Ընդ որում պետք է հատուկ սահմանել վարչական հսկողություն իրականացնողի և հսկողության տակ գտնվող անձի իրավունքների և պարտականությունների շրջանակը և դրանց խախտման դեպքում նախատեսել հնարավորինս խիստ պատիժներ:

Ռեցիդիվային հանցավորության կանխարգելման էական պայմանները ուղղակի փոխկապակցված են հանցագործության հայտնաբերումն ու բացահայտումը էլ ավելի ուժեղացնելու, արդարացի պատժային քաղաքականություն ապահովելու մեջ, ինչի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է իրավապահական համակարգի աշխատողների մասնագիտական գիտելիքների մշտական կատարելագործմամբ և իրենց աշխատանքով հասարակության հարգանքի ու վստահության վայելմամբ: Բոլորովին զաղտնիք չէ, որ իրավապահական մարմինները կրել և շարունակում են կրել ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարի ողջ պատասխանատվությունը:

Ռեցիդիվի չափերի նվազեցմանը կարող է նպաստել ազատագրված կիրառման շրջանակների սահմանափակումը՝ ի հաշիվ այլընտրանքային պատժատեսակների կիրառման հաճախականության: Իսկ որպես հատուկ ռեցիդիվի կանխարգելման արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը:

Այսպիսով՝ ռեցիդիվային հանցավորության և առհասարակ ողջ հանցավորության կանխման խնդիրը պետք է դրվի ոչ միայն պետության, այլև հասարակության վրա, քանի որ միայն համատեղ աշխատանքով կարելի է հասնել ցանկալի դրական արդյունքների:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Шаргородский М.Д. Наказание по советскому уголовному праву. М., 1958, стр.43. Яковлев А.М. Борьба с рецидивной преступностью. М.,1964, стр.8-9, Ефимов М.А., Рецидивная преступность и ее предупреждение. Минск, 1977. стр 8.
2. Кузнецова Н.Ф. Преступность и преступление. М., стр. 178.
3. Жумабеков О. Рецидивная преступность: факты и проблемы//Фемида.1999. N8, стр.19.
4. Карпец И.М. Проблема преступности. М., 1969. стр. 96.
5. Яковлев А. М. Борьба с рецидивной преступностью. М., 1964, стр. 43.
6. Антонян Ю.М. Криминология.Избранные лекции, М., 2004. стр.123-124.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ռեցիդիվային հանցավորության կանխման հիմնախնդիրները Համիկ Հարությունյան

Ռեցիդիվային հանցավորությունը ամենավտանգավոր հանցատեսակներից մեկն է: Վերջինս օժտված է հանրային բարձր վտանգավորությամբ: Հոդվածում քննարկվում են ռեցիդիվային հանցավորության կանխման հիմնական ուղղությունները: Ռեցիդիվային հանցավորության կանխումը ենթադրում է մի շարք համալիր ընդհանուր սոցիալական և հատուկ քրեագիտական բնույթի միջոցառումների իրականացում:

Բանալի բառեր՝ ռեցիդիվային, հանցավորություն, կանխում, ընդհանուր սոցիալական, հատուկ քրեագիտական միջոցառումներ:

РЕЗЮМЕ

**Проблема предупреждений рецидивной преступности
Асмик Арутюнян**

Рецидивная преступность была и остается одним из наиболее опасных видов преступности. Поэтому в статье были рассмотрены основные меры предупреждения рецидивной преступности. Предупреждение рецидивной преступности как главная задача каждого государства следует осуществлять в двух направлениях: социальном и узком, как часть предупреждения одной из опасных форм преступности силами правоохранительной системы.

***Ключевые слова:** рецидивная, преступность, предупреждение рецидивной преступности, общие социальные меры, уголовно - правовые меры.*

SUMMARY

**The Problem of Recidivism Prevention
Hasmik Harutyunyan**

Recidivism has been and remains one of the most dangerous types of crime. Therefore, this article discusses the main measures to prevent recidivism. The prevention of recidivism being the main task of every state should be carried out in two directions: social and narrow, as part of a warning of the dangerous forms of crime by the law-enforcement system.

***Keywords:** Relapse, culpability, prevention of crime, complex social, criminological special events.*